ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/168

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ղ. Բարիկյանի (լիազորագիր տրված՝ 30.07.2020թ.),

Հ. Օհանյանի (լիազորագիր տրված՝ 30.07.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 24.07.2020թ. թիվ 26/26-1/11121-2020 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի՝ 23.07.2020թ. թիվ 20/2020 գրության հիման վրա, 24.07.2020թ. թիվ 26/26-1/11121-2020 գրությամբ նախաձեռնել է «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2020/168 ծածկագրով ընթացակարգը:

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 23.07.2020թ.-ի թիվ 20/2020 գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1.1. Պատվիրատուն 23.06.2020թ. www.armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետև նաև՝ Էլեկտրոնային համակարգ) միջոցով հրապարակել է թիվ ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցում: Հայտերի բացման օրը նշանակվել էր 01.07.2020թ. ժամը 11:00-ին:

1.2. Մրցույթի հրավերը ենթարկվել է փոփոխության, սակայն հրավերի փոփոխության մասին հայտարարությունը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) չի հրապարակվել, բացի այդ հրավերը փոփոխելուց հետո հայտերի ներկայացման ժամկետը չի երկարացվել:

1.3. Հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով 25.06.2020թ. և 26.06.2020թ. կատարվել են հարցումներ, սակայն հարցումների և պարզաբանումների բովանդակության վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 03.07.2020թ.:

1.4. Մրցույթի շրջանակներում 03.07.2020 թվականի ժամը 10:00-ին կայացած գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմված արձանագրության համաձայն, Մասնակիցը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած (ընտրված մասնակից):

10.07.2020թ. Պատվիրատուն ուղարկել է Մասնակցին պայմանագրի նախագիծը և ծանուցման միջոցով առաջարկել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները: Նշված 10 աշխատանքային օր ժամկետը ավարտվում էր 24.07.2020թ.:

1.5. Մասնակիցը իր 10.07.2020թ.-ի թիվ ԱՀ-21, 20.07.2020թ.-ի թիվ ԱՀ-23 և 22.07.2020թ. թիվ ԱՀ-24 գրությունների միջոցով վարել է Պատվիրատուի հետ բանակցություններ և հայտնել է իր մտահոգությունը պայմանագրի նախագծում նշված ժամկետների վերաբերյալ, քանի որ այդ պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածում (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ) նշված ժամկետների միջև կար անհամապատասխանություն և անորոշություն:

1.6. Մրցույթի շրջանակներում 23.07.2020թ. ժամը 12:00-ին կայացած գնահատող հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմված արձանագրությամբ (այսուհետև նաև՝ Արձանագրություն) նշված է, որ 2020 թվականի հուլիսի 23-ին Մասնակիցը հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Նույն արձանագրությամբ Մրցույթի ընտրված մասնակից է ճանաչվել «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն:

Մրցույթի շրջանակներում Պայմանագիրը կնքելուց հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն Մասնակիցը չի արել:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները՝

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

«4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում, (...):

5. Բաց մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, (...):»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ) 80-րդ կետի համաձայն՝ գնանշման հարցման ձևով գնում կատարելու դեպքում հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ

օրացուցային օրվանից, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից:

Մրցույթի հրավերի 3.4 և 3.6 կետերի համաձայն՝

«3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում:

3.6 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: (…):»:

Հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարության օրինակելի ձևը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 30-ի թիվ 265-Ա հրամանով:

Վերը նշված նորմերի համաձայն, գնման ընթացակարգի հրավերում պատվիրատուն կարող է կատարել փոփոխություններ: Ընդ որում, հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում պատվիրատուն այդ մասին Տեղեկագրում և Էլեկտրոնային համակարգում պարտավոր է հրապարակել հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարություն իսկ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, այսինքն՝ գնանշման հարցման հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում հայտերի ներկայացման ժամկետը պետք է պակաս չլինի 7 օրացույցային օրվանից հաշված հրավերում փոփոխություն կատարելու օրից:

Նշյալից հետևում է, եթե հրավերում կատարվել են փոփոխություններ և չեն պահպանվել վերը նշված նորմերի պահանջները, ապա կարող ենք փաստել, որ այդ գնման ընթացակարգը իրականացվել է Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ, հետևաբար այդ ընթացակարգը շահագրգիռ անձի պահանջով կարող է ճանաչվել անվավեր: ՈՒստի դա վկայում է այն մասին, որ այդ մրցույթի շրջանակներում ընդունված որոշումները նույնպես անվավեր են:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից Պատվիրատուն Մրցույթի հրավերում կատարել է փոփոխություններ, սակայն ոչ Տեղեկագրում, ոչ էլ Էլեկտրոնային

համակարգում այդ մասին հայտարարություն չի հրապարակվել, ավելին՝ հրավերում փոփոխություններ կատարելուց հետո հայտերի ներկայացման ժամկետը անգամ չի փոփոխվել: Այսպիսով կարող ենք փաստել, որ Մրցույթը իրականացվել է խախտումներով և հետևաբար այդ մրցույթի շրջանակներում ընդունված որոշումները կարող են ճանաչվել անվավեր: Բացի այդ, Պատվիրատուի դրսևորած անգործության պատճառով, մասնավորապես՝ հայտերի ներկայացման ժամկետը չերկարացնելու պատճառով Մասնակիցը զրկվել է հրավերի տեքստը պատշաճ ուսումնասիրելու և այդ ուսումնասիրության արդյունքում լիարժեք հիմնավորված հայտ ներկայացնելու, և հրավերի անհասկանալի ու անորոշ դրույթների վերաբերյալ հարցումներ կատարելու և պարզաբանումներ ստանալու հնարավորությունից:

2.2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, (…):»:

Մրցույթի հրավերի 3.1 և 3.2 կետերի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջել հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և Տեղեկագրում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Հրավերի պարզաբանման մասին հայտարարության օրինակելի ձևը հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի մայիսի 30-ի թիվ 265-Ա հրամանով:

Վերը նշվածի համաձայն՝ մասնակիցները իրավունք ունեն հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում իսկ պատվիրատուն

պարզաբանումը ստանալու օրվան հաջորդող 2 օրացուցային օրվա ընթացքում պարտավոր է պատասխանել այդ պարզաբանմանը, բացի այդ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը պարտադիր պետք է հրապարակվի Տեղեկագրում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը Տեղեկագրում հրապարակելը ինքնանպատակ չէ, այն ուղղված է պահպանելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության, գնման գործընթացի թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու սկզբունները: Քանի որ հարցման վերաբերյալ պարզաբանումը Տեղեկագրում չհրապարակելը կարող է հանգեցնել նրան, որ պարզաբանումը ստացած մասնակիցը իր ունեցած տեղեկության շնորհիվ գնման ընթացակարգի շրջանակներում կարող է ձեռք բերել առավելություն այն մասնակցի նկատմամբ ով պարզաբանումը Տեղեկագրում հրապարակված չլինելու պատճառով չի տիրապետում այդ տեղեկատվությանը:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Մրցույթի հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով 25.06.2020թ. և 26.06.2020թ. կատարվել են հարցումներ, սակայն հարցումների և պարզաբանումների բովանդակության վերաբերյալ հայտարարությունը Օրենքով սահմանված ժամկետում չի հրապարակվել Տեղեկագրում, ավելին՝ այդ հայտարարությունը Տեղեկագրում հրապարակվել է միայն հայտերի բացման նիստից հետո, այսինքն՝ այն ժամանակ, երբ այդ տեղեկատվությունը ըստ էության արդեն պիտանի չէր:

Ինչպես փաստեցինք սույն դիրքորոշման 2.1 կետով, այս դեպքում ևս կարող ենք փաստել, որ Մրցույթը իրականացվել է Օրենքով սահմանված կանոնների խախտմամբ:

2.3. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: (...):»:

Վերը նշվածի համաձայն, մասնակիցը պայմանագիրը կնքելուց զրկվում է, երբ պայմանագիրը կնքելու վերաբերյալ ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց

հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Պատվիրատուն պայմանագիրը կնքելու վերաբերյալ ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկել է Մասնակցին 2020 թվականի հուլիսի 10-ին, այդ օրվանից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետը ավարտվում էր 2020 թվականի հուլիսի 24-ին: Հետևաբար Մասնակիցը մինչև 24.07.2020թ.-ն ուներ իրավունք պայմանագրի նախագիծը կնքել և ներկայացնել Պատվիրատուին: Սակայն, չսպասելով այդ օրվան Պատվիրատուն անհասկանալի պատճառով Արձանագրությաբ նշել է, որ Մասնակիցը հրաժարվում է պայմանագիրը կնքելուց և նույն արձանագրությամբ Մրցույթի ընտրված Մասնակից է ճանաչել մեկ այլ կազմակերպության: Ցանկանում ենք նշել, որ Մրցույթի շրջանակներում պայմանագիրը կնքելուց հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն Մասնակիցը չի արել:

Իսկ ինչ վերաբերվում է Մասնակցի և Պատվիրատուի միջև գրությունների միջոցով տեղի ունեցած բանակցություններին, ապա Մասնակցի անունից կարող ենք ասել, որ այդ կերպ Մասնակիցը օգտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով իրեն վերապահված իրավունքից և փորձել է ձեռք բերել Պատվիրատուի համաձայնությունը պայմանագրի նախագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Քանի որ պայմանագրի նախագծին կից թիվ 1 հավելվածում (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ) նշված ժամկետների միջև կար անհամապատասխանություն և անորոշություն:

3. Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2020/168 ծածկագրով ընթացակարգը:

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/168 ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարարադրված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.07.2020թ. թիվ 20/2020 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կարիքների համար «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով կադաստրային քարտեզագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ձևով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն: Սահմանված ժամկետներում՝ 10.07.2020թ., մասնակցին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Սույն թվականի հուլիսի 10-ին «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն դիմել է Պատվիրատուի ղեկավարին Պայմանագրի 7.5 կետի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետները երկարաձգելու վերաբերյալ առաջարկով:

14.07.2020թ. Պատվիրատուի ղեկավարի կողմից «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին տրամադրվել է պատասխան-հիմնավորում, որտեղ մանրամասնորեն շարադրված է եղել պայմանագրի կատարման ժամկետների երկարաձգման անհնարինությունը:

23.07.2020թ. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/168 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/168 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իր կարիքների համար կադաստրային քարտեզագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 9.1 կետի համաձայն՝ 03.07.2020թ. որոշում է կայացվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին 10.07.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

4. Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն դիմել է Պատվիրատուի ղեկավարին Պայմանագրի 7.5 կետի համաձայն պայմանագրի կատարման ժամկետները երկարաձգելու վերաբերյալ առաջարկով:

5. Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ 14.07.2020թ. Պատվիրատուի ղեկավարի կողմից Ընկերությանը տրամադրվել է պատասխան հիմնավորում, պայմանագրի ժամկետների երկարաձգման անհնարինության վերաբերյալ:

6. Նույն արձանագրության 1.4 կետի համաձայն՝ Ընկերությունը հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 24.07.2020թ. թիվ 26/26-1/11121-2020 գրությունը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի՝ 23.07.2020թ. թիվ 20/2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով

սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իր կարիքների համար կադաստրային քարտեզագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ թիվ 2 արձանագրության 9.1 կետի համաձայն՝ 03.07.2020թ. որոշում է կայացվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ ***«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին <u>10.07.2020թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել</u> պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (փասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:***

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն դիմել է Պատվիրատուի ղեկավարին Պայմանագրի 7.5 կետի համաձայն պայմանագրի կատարման ժամկետները երկարաձգելու վերաբերյալ առաջարկով:

Ընկերությունը 10.07.2020թ. թիվ ԱՀ-21 գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել հետևյալը.

«Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից ս/թ. հուլիսի 7-ին «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն ստացել է ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով գնանշման հարցման արդյունքում պայմանագիր կնքելու առաջարկը, որին կցված է պայմանագրի նախագիծը:

Տեղեկացնում եմ, որ պայմանագրի նախագծում և համապատասխանաբար գնանշման հարցման հրավերում կա անհամապատասխանություն ծառայության մատուցման փուլային և ավարտական ժամկետների միջև:

Մասնավորապես պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև դեկտեմբերի 21-ը, իսկ նույն հավելվածի տեխնիկական բնութագրի ծառայությունների կատարման ժամանակացույցի փուլային ժամկետների համաձայն ծառայությունները պետք է մատուցվեն 6 ամսվա ընթացքում, որը կախված պայմանագրի ուժի մեջ մտնելու օրից՝ ստացվում է ոչ շուտ քան 2021թվականի հունվարի 25-ը:

Անհամապատասխանություն կա նաև ծառայությունների մատուցման փուլային ժամկետների միջև, մասնավորապես, նախապատրաստական 1-ին փուլը պետք է իրականացվի 3 ամսվա ընթացքում, որի ավարտը ստացվում է առնվազն հոկտեմբերի 25-ը: Հաջորդիվ իրականացվելիք 2-րդ փուլը պետք է իրականացվի 1-ին փուլի արդյունքում ստացված մշակված տեղեկատվության հիման վրա՝ 1-ին փուլի ավարտից հաշված 2 ամսվա ընթացքում, սակայն 2-րդ փուլի ավարտի ժամկետը ժամանակացույցի համաձայն սահմանափակված է սեպտեմբերի վերջին տասնօրյակով: Ծառայությունների մատուցման տեխնոլոգիական գործընթացը, ինչպես նաև տեխնիկական բնութագրի պահանջները հնարավորություն չեն ընձեռում առանց բացահայտելու խաղողի այգիների տեղադրությունը (1-ին փուլը), մատուցել 2-րդ փուլի ծառայությունները: Այլ կերպ ասած, մինչև չիրականացվեն խաղողի այգիների նախնական տվյալների հավաքագրումը, հայտնաբերումը, նախնական սահմանների ճշտումը, կոորդինատների վերծանումը և օդալուսանկարահանման համար անհրաժեշտ պոլիգոնների՝ թռիչքային երթուղիների կազմումը, հնարավոր չի լինի իրականացնել օդալուսանկարահանումը և վերգետնյա հայտնի կետերի տեղադրումը:

Մենք չենք բացառում նաև այն հնարավորությունը, որ 1-ին փուլի իրականացման երրորդ ամսվանից սկսված զուգահեռ 2 ամիս ժամկետային միջակայքային տարբերությամբ կսկսենք իրականացնել նաև 2-րդ փուլը, սակայն այդ փուլերի համատեղ իրականացման հնարավորությունը ընդամենը տնտեսելու է ոչ ավել քան մեկ ամիս և օգնելու է մեզ աշխատանքներն իրականացնել ժամանակացույցով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր է լինեն օրեր, երբ եղանակային պայմաններից (անձրև, քամի, ձյուն, ցածր տեսանելիություն) ելնելով հնարավոր չի լինի իրականացնել դաշտային աշխատանքները, այդ թվում օգտագործել օդալուսանկարահանող սարքերը:

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ տեխնիկական բնութագրի 9. Հատուկ պայմաններ կետում սահմանված է, որ Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում նկարահանման աշխատանքների ընթացքում առաջացող սահմանափակումների և խոչընդոտների համար: Դրանից հետևում է, որ կատարողը ինքնուրույն պետք է ապահովի հատուկ պետական և ռազմական նշանակության տարածքների (պետական սահման, ՀԱԷԿ, զորամասեր, գաղտնիության ռեժիմ ունեցող օբյեկտներ, քրեակատարողական հիմնարկներ և այլն) ներսի և/կամ հարող հատվածներում գտնվող խաղողի այգիների օդալուսանկարահանման և վերգետնյա հայտնի կետերի տեղադրման թույլտվությունների ստացումը, ինչպես նաև կարգավորի մասնավոր հողոգտագործողների հետ կապված համաձայնությունները՝ իրենց տարածքում աշխատանքներն իրականացնելու համար: Այս ամբողջ գործընթացը պետք է իրականացվի նախապատրաստական 1-ին փուլի ընթացքում, որից հետո նոր հնարավոր կլինի անցնել 2-րդ փուլի իրականացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալ անհամապատասխանությունները, խնդրում ենք հրավերի 9.7 կետի համաձայն ներկայացված պայմանագրի նախագծում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայությունների մատուցման ժամկետը սահմանել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 6 ամիս կամ մինչև 2021թ. հունվարի 25-ը
2. պայմանագրի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի տեխնիկական բնութագրի ծառայությունների կատարման ժամանակացույցի 2-րդ տողի 2-րդ սյունյակում հանել «(վերջնաժամկետ՝ սեպտեմբերի վերջին տասնօրյակ)» ժամկետային սահմանափակումը՝ թողնելով միայն «2 ամիս» ժամկետը
3. Համապատասխան փոփոխություն իրականացնել նաև պայմանագրի հավելված 2 վճարման ժամանակացույցում՝ վճարումները նախատեսելով 2020թ. օգոստոսից մինչև 2021թ. փետրվար ամիս:

Պայմանագրի նախագծում փոփոխությունների իրականացումն անհրաժեշտ է նաև պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների ժամկետները ճշգրիտ նշելու համար»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ 14.07.2020թ. Պատվիրատուի ղեկավարի

կողմից Ընկերությանը տրամադրվել է պատասխան հիմնավորում, պայմանագրի ժամկետների երկարաձգման անհնարինության վերաբերյալ:

Այնուհետև՝ 20.07.2020թ. Պատվիրատուին ուղղված թիվ ԱՀ-23 գրությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Գրությամբ փորձում եք հիմնավորել, որ նախապատրաստական աշխատանքները կարող են իրականացվել նաև դաշտային աշխատանքներին զուգահեռ և նույնիսկ դրանից հետո, այսինքն զուգահեռ արվեն և նախապատրաստական և դաշտային աշխատանքները, դաշտային աշխատանքներն ավարտվեն ավելի շուտ, որից հետո ավարտին հասցվեն նաև նախապատրաստական աշխատանքները: Մեր կարծիքով Ձեր առաջարկ-հիմնավորումը չի համապատասխանում աշխատանքների իրականացման տեխնոլոգիական գործընթացին և տեխնիկական բնութագրին: Աշխատանքների իրականացման տարածքները ՀՀ 3 մարզերում են, որոնք միասին Թուրքիայի հետ ունեն առնվազն 150 կմ երկարությամբ պետական սահման, իսկ Արարատի մարզն էլ Նախիջևանի հետ ունի շուրջ 50 կմ սահման: Թույլտվություն անհրաժեշտ կլինի ստանալ սահմանային առնվազն 5կմ լայնությամբ գոտում աշխատանքներ իրականացնելու համար: ՀՀ օրենսդրությամբ սահմանված է օդալուսանկարահանման թույլտվությունների ստացման կարգ, որում կան սահմանված ժամկետներ, ինչը դուք հաշվի չեք առնում Ձեր գրությամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 19.09.2002թ. N 1581-Ն որոշմամբ հաստատված Պետական և ծառայողական գաղտնիք բովանդակող տեղագրագեոդեզիական նյութերից ու տվյալներից օգտվելու համար թույլտվություն ստանալու կարգի համաձայն՝ ՀՀ սահմանային գոտիներում օդալուսանկարահանման աշխատանքներ իրականացնելուց առաջ պետք է դիմել կադաստրի կոմիտե՝ ներկայացնելով տարածքների սխեմաները, որից հետո Կոմիտեն ուսումնասիրում է ստացված հայտերը և 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարության համաձայնեցմանն է ներկայացնում օդահանութագրական աշխատանքների նախագիծը և տեխնիկական առաջադրանքը: Իսկ ինչքան կտևի վերջնական թույլտվության ստացման համար ՀՀ ՊՆ-ից և ՀՀ ԱԱԾ-ից, կարգով հստակեցված չի:

Տեխնիկական բնութագրում առկա ժամկետային անհամապատասխանությունները շտկելու հետ կապված Ձեր դիրքորոշումը անհնարին են դարձնում տվյալ աշխատանքների իրականացումը:

Մենք տվյալ աշխատանքները կարող ենք և պատրաստակամ ենք իրականացնել տեխնիկական բնութագրում սահմանված փուլային հերթականությամբ՝ վեց ամսվա ընթացքում, որի մեջ մտնում են նաև թույլտվություններ ստանալու ժամկետները, հակառակ պարագայում «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն չի կարող իրականացնել աշխատանքները Ձեր գրությամբ մեկնաբանված կարգով և ժամկետներում»:

Պատվիրատուն՝ 20.07.2020թ. թիվ 19/2020 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ խնդրելով հստակեցնել արդյոք «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատուցել ծառայությունը հրավերով և պայմանագրի նախագծով սահմանված ժամկետներում:

Ընկերությունը 22.07.2020թ. թիվ ԱՀ-24 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ս/թ. հուլիսի 20-ի N19/2020 գրության հայտնում ենք, որ մեր դիրքորոշումը և հիմնավորումները շարադրված էին մեր նախորդ գրություններում և փոփոխության չի ենթարկվել:

Հաշվի առնելով, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը չի համաձայնվում շտկել հրավերի տեխնիական բնութագրում առկա ժամկետային անհամապատասխանությունները, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն չի կարող իրականացնել աշխատանքները Ձեր նախորդ գրություններով պարզաբանված ժամկետներում»:

Այնուհետև՝ 23.07.2020թ. արձանագրության 1.4 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությունը հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 10.07.2020թ. ծանուցել է Ընկերությանը ***պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 24.07.2020թ. ներառյալ, ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (փասը) փոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով, այնուհետև՝ մինչև նշված ժամկետի լրանալը, այն է՝ 23.07.2020թ., որպես պայմանագիր կնքելուց հրաժարվել դիտարկելով Ընկերության գրությունը՝ հրավերով և պայմանագրի նախագծով***

սահմանված ժամկետներում աշխատանքների իրականացման անհնարինության վերաբերյալ, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Մինչդեռ՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը*** և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, ***որ Պատվիրատուն, 23.07.2020թ.՝ 10 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելով, խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները,*** ուստի՝ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.07.2020թ. թիվ 26/26-1/11121-2020 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**